




# 2011 ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ – ՀԱՅԱՍՏԱՆ

15-րդ խմբագրություն, հունիս 2012թ.


## ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ. 4.0

2011թ. Հայաստանի ՔՀԿ-ները դժվարությունների են հանդիպել տարբեր ոլորտներում: Ի պատասխան շահերի պաշտպանության բազմաթիվ ակտիվ քարոզարշավների՝ պետությունը ավելացրեց իր ճնշումը ՔՀԿ-ների վրա: Ընդ որում, մի շարք հրապարակումներ և հեռուստատեսային հաղորդումներ թողարկվեցին, որոնք իրավապաշտպան և մոնիտորինգ իրականացնող (watchdog) ՔՀԿ-ներին ներկայացնում էին որպես դոնորների քաղաքականությունն իրականացնող և “գրանտակեր” կազմակերպություններ: Միաժամանակ, քաղաքական և գործարար վերնախավի ավելի ու ավելի շատ ներկայացուցիչներ հիմնադրեցին բարեգործական ՔՀԿ-ներ և հիմնադրամներ, որը հանրության մոտ երկակի տպավորություն էր ստեղծում ՔՀԿ-ների և մյուս հատվածների հարաբերությունների մասին:

## Հայաստանի 2011 ցուցանիշները



## Ներկայիս իրավական դաշտը դեռևս սահմանափակում է ՔՀԿ-ների կայունությունը՝ հետ պահելով ՔՀԿ-ներին ձեռնարկատիրական գործունեությունից և հարկային որևէ արտոնություն չտրամադրելով նրանց: Այնուամենայնիվ, վերջին տարիներին որոշ կազմակերպություններ (think-tanks) հանդես են եկել օրենսդրական առաջարկներով,



որոնք կնպաստեն ոլորտի հետագա զարգացմանը: Եթե այս առաջարկություններն ընդունվեն, ապա դրանք կօգնեն ՔՀԿ-ների զարգացմանը հարկային ու իրավական արտոնությունների տրամադրման միջոցով:

Եթե այս առաջարկություններն ընդունվեն, ապա դրանք կօգնեն ՔՀԿ-ների զարգացմանը հարկային ու իրավական արտոնությունների տրամադրման միջոցով:




<sup>1</sup> ՔՀԿ՝ Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

Միջազգային դոնորների կողմից ՔՀԿ-ների աջակցությունն 2011թ. ավելացավ: Այնուամենայնիվ, ֆինանսավորման մեծ մասը հատկացվում է կոնկրետ գործունեությանն ու ծրագրերին՝ դրանով իսկ շատ քիչ միջոցներ թողնելով ՔՀԿ-ների վարչական կամ կազմակերպչական ծախսերի համար: Կայուն և երկարաժամկետ ֆինանսավորման պակասը սրում է ՔՀԿ-ների՝ աշխատակազմի պահպանման հետ կապված խնդիրները և նվազեցնում է ՔՀԿ-ների ինստիտուցիոնալ կարողությունները: Չնայած առկա մարտահրավերներին՝ 2011թ. ՔՀԿ-ները սոցիալական ցանցերի միջոցով ավելի հաջողված հանրային քննարկումներ ու շահերի պաշտպանության նախաձեռնություններ կազմակերպեցին:

Ըստ ՀՀ Արդարադատության նախարարության, 2011թ. Հայաստանում գրանցված էին 3749 հասարակական կազմակերպություններ, 750 հիմնադրամներ և 301 իրավաբանական անձանց միություններ: Այնուամենայնիվ, այս կազմակերպություններից մոտ 15-20% է միայն ակտիվ գործում:

### ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ՝ 3.9



Ներկայիս իրավական դաշտը սահմանում է ՔՀԿ-ների երկու առաջնային տեսակներ: Հասարակական կազմակերպությունները անդամակցության վրա հիմնված կազմակերպություններ են, որոնք կարգավորվում են 2001թ. ընդունված “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքով: Հիմնադրամները

անդամություն չունեցող կազմակերպություններ են և կարգավորվում են 2002թ. ընդունված “Հիմնադրամների մասին” ՀՀ օրենքով: Բացի այդ, 2002թ. “Բարեգործության մասին” ՀՀ օրենքը ներմուծում է բարեգործական կազմակերպությունների հասկացությունը, որը վերաբերում է այն ոչ-առևտրային կազմակերպություններին, որոնք իրենց անվանման մեջ պետք է ունենան “բարեգործություն” բառը և իրականացնեն բացառապես բարեգործական գործունեություն: Բարեգործական կազմակերպությունները, որպես կանոն, գրանցվում են որպես հասարակական կազմակերպություններ կամ հիմնադրամներ:

Հասարակական կազմակերպությունները (ՀԿ) գրանցվում են ՀՀ Արդարադատության նախարարության ներքո գործող Պետական ռեգիստրում: Բարդ վարչարարական ընթացակարգերը ՔՀԿ-ներից պահանջում են ներկայացնել զգալի թվով փաստաթղթեր և բազմաթիվ անգամ այցելել Պետոեգիստր: Քանի որ Պետոեգիստրը մարզերում գրասենյակներ չունի, մարզային ՔՀԿ-ներից լրացուցիչ ֆինանսական ծախսեր են պահանջվում գրանցումը ստանալու նպատակով դեպի Երևան բազմաթիվ այցելությունների համար: ՔՀԿ-ների շարունակական պահանջների և բողոքների արդյունքում՝ Պետոեգիստրն այժմ մշակում է գրանցված ՔՀԿ-ների առցանց տվյալների բազա, որն էլ 2012թ. ընթացքում հնարավորություն կընձեռի ստեղծել և ներմուծել գրանցման առցանց համակարգ:

Սկսած 2009թ. ՔՀԿ-ները պայքարում էին “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքի փոփոխությունների նախագծի դեմ, որը թույլ է տալիս երրորդ կողմին անդամների ընդհանուր ժողով հրավիրել կամ դատական գործ հարուցել


կազմակերպության դեմ: Շահերի պաշտպանության քարոզարշավի շնորհիվ, 2010թ. այս նախագիծը չորս անգամ փոփոխվեց, որի արդյունքում ամենավիճահարույց հոդվածները հանվեցին: Այնուամենայնիվ, նախագծում դեռևս մնում է այն դրույթը, ըստ որի ՀԿ-ներից պահանջվում է հաշվետվություն հրապարակել որոշակի թերթերում՝ ծախսերով տարեկան մոտ 300 ԱՄՆ դոլար: Շահերի պաշտպանության շարունակական քարոզարշավների արդյունքում Ազգային ժողովում նախագծի ընթերցումները մի քանի անգամ չեղյալ հայտարարվեցին, սակայն օրենքի նախագիծը հետ չկանչվեց:

2010թ. օգոստոսի 5-ին ՀՀ կառավարությունը որոշում էր ընդունել ՀՀ Արդարադատության նախարարության ներքո իրավաբանական անձանց գործունեության օրինականության վերահսկողության տեսչություն հիմնադրելու մասին: Այս որոշումը թույլ էր տալիս կառավարությանը կարգավորել հասարակական կազմակերպությունների գործունեության բոլոր բնագավառները՝ ներառյալ ֆինանսական գործարքները և օրենքների հետ համապատասխանությունը: ՔՀԿ-ների կողմից շարունակական ճնշման և նախարարության վերակազմավորման արդյունքում 2011թ. գարնանը կառավարությունը չեղյալ հայտարարեց այս որոշումը:

Հասարակական կազմակերպությունների մասին օրենքի փոփոխությունների նախագծի դեմ քարոզարշավը, Արդարադատության նախարարության կադրային փոփոխությունների հետ միասին, 2011թ. հանգեցրեց ՔՀԿ օրենսդրության բարելավման նպատակով Կառավարության և ՔՀԿ-ների մասնակցությամբ համատեղ աշխատանքային խմբի ստեղծմանը: Խումբը պետք է վերանայի առկա օրենսդրությունը և մշակի բարելավումները ուրվագծող մի հայեցակարգ՝ ՀՀ Կառավարության հետագա քննարկմանը ներկայացնելու նպատակով:

ՀԿ-ների համար օրենքով արգելված է ցանկացած տեսակի ձեռնարկատիրական գործունեության մեջ ուղղակի ներգրավումը, ներառյալ հանրային գնումները, սակայն հիմնադրամների համար նման արգելք չկա: ՔՀԿ-ներն ավտոմատ կերպով չեն ազատվում որևէ հարկատեսակից, թեև որոշ դեպքերում նրանք կարող են դիմել կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովին՝ կոնկրետ ծրագիրը ԱԱՀ-ից (ավելացված արժեքի հարկից) ազատելու համար: Սակայն վարչարարական ընթացակարգերի պատճառով այդ արտոնությունը մեծ հաշվով անհասանելի է դառնում կարճաժամկետ կամ փոքր ծրագրերի համար: Բացի այդ, հանձնաժողովն ըստ ավանդույթի հարկերից ազատում է միայն մարդասիրական գործունեությունը և ոչ թե զարգացման կամ այլ ծրագրերը:

### ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ 3.9



ՔՀԿ-ների կազմակերպական կարողությունը, որպես կանոն, կետրոնացված է լինում մեկ անձի շուրջ, ով հիմնականում տնօրենն է կամ նախագահը: Այս անձը սովորաբար հանդես է գալիս որպես կազմակերպության միակ ներկայացուցիչ և կայացնում է կազմակերպության որոշումների մեծ մասը: Թեև ՔՀԿ-ների մեծ մասն ըստ

կանոնադրության ունեն տնօրենների կամ հոգաբարձուների խորհուրդ, շատ դեպքերում

խորհուրդը կամ խորհրդանշական դեր է խաղում, կամ ներգրավված է կազմակերպության գործունեության մեջ՝ որպես գործադիր աշխատակազմ՝ այսպիսով չկարողանալով պատշաճ կերպով իրականացնել ղեկավարման իր պարտականությունները:


Ավելի շատ ՔՀԿ-ներ են գտնում, որ անհրաժեշտ է ռազմավարական պլան ունենալ, սակայն նրանք ձգտում են մշակել այդ պլանը ավելի շատ դոնորների պահանջներին համապատասխանելու, քան իրենց շահառուների իրական կարիքները բավարարելու նպատակով: Շատ քիչ ՔՀԿ-ներ, հիմնականում շահերի պաշտպանության մեջ ներգրավված կազմակերպությունները, ձգտում են իրենց նախաձեռնությունների համար տեղերում աջակից խմբեր ստեղծել:

Հավաքագրման մեխանիզմներ և մարդկային ռեսուրսների կանոնակարգեր օգտագործող կազմակերպությունների թիվն աճում է: Սակայն ֆինանսավորման պակասը բարդություններ է ստեղծում ՔՀԿ-ների համար արհեստավարժ անձնակազմ վարձելու և պահելու առումով: ՔՀԿ-ները նշում են նաև թափուր հաստիքների համար որակավորված դիմորդների պակաս: Արդյունքում աշխատակազմի անդամները հաճախ իրենց վրա են վերցնում ավելին, քան մի պաշտոնի պարտականություններն են: Մարզային ՔՀԿ-ների աշխատակիցները հաճախ թողնում են իրենց աշխատանքը՝ մայրաքաղաքի ՔՀԿ-ներում աշխատանք գտնելու նպատակով: Աշխատակազմի հոսքը վտանգում է նույնիսկ արդեն կայացած ՔՀԿ-ների կարողությունները:

Արհեստավարժ աշխատակազմի փոխարեն՝ շատ կազմակերպություններ հույս են դնում կամավորների վրա: ՔՀԿ-ները զարգացրել են կամավորների կառավարման իրենց ունակությունները: Այնուամենայնիվ, կամավորությունը կանոնակարգող օրենսդրության թերացումները, մասնավորապես սոցիալական ապահովության պարտադիր վճարների վերաբերյալ դրույթը, սահմանափակում են կամավորների մեծածավալ ներգրավումը և կամավորների շրջանում ևս նպաստում են կադրերի հոսքին:

ՔՀԿ-ների մեծ մասին հասանելի են գրասենյակային հիմնական պարագաները: Համացանցի հասանելիությունը զգալիորեն բարելավվել է հեռավոր մարզերում, ինչը նշանակում է, որ ավելի շատ կազմակերպություններ այժմ իրենց հաղորդակցության և կառավարման համար կարող են օգտվել համացանցից և էլեկտրոնային գործիքներից:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ՝ 5.2



Թեև ֆինանսական կայունությունը շարունակում է մնալ հայաստանյան ՔՀԿ-ների առաջնային խնդիրներից մեկը, 2011թ. ՔՀԿ-ների համար առկա միջազգային ֆինանսավորման ծավալը ընդլայնվեց ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող մի շարք ծրագրերի մեկնարկով: Մասնավորապես, 15.5 մլն ԱՄՆ դոլարի բյուջեով “Քաղաքացիական հասարակության և

տեղական ինքնակառավարման աջակցության” քառամյա դրամաշնորհային ծրագիրը ինստիտուցիոնալ զարգացման աջակցության մի շարք հնարավորություններ է ընձեռում ՔՀԿ-ներին ու ոչ ֆորմալ խմբերին:

Ներկայումս ավելի ու ավելի շատ կազմակերպություններ են գիտակցում իրենց ռեսուրսները բազմազանեցնելու և դրամաշնորհային ֆինանսավորման այլընտրանք գտնելու անհրաժեշտությունը: Սակայն ՔՀԿ-ները համապատասխան գիտելիքներ կամ կարողություններ չունեն՝ տեղական բիզնեսներից կամ անհատներից միջոցներ հայցելու համար: Դրամահավաքի նախաձեռնություններին խոչընդոտում է նաև Հայաստանում բարեգործության մշակույթի բացակայությունը: Չնայած նշված խոչընդոտներին, մի խումբ ՔՀԿ-ներ հաջողությամբ իրականացնում են հանրային դրամահավաքներ, հատկապես աչքի ընկնելով մարզերում, որտեղ ՔՀԿ գործունեությունն ավելի տեսանելի է: Օրինակ, «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն հավաքել է 250,000 ՀՀ դրամ (մոտ 650 ԱՄՆ դոլար)՝ Սյունիքի ու Վայոց Ձորի մարզերի գյուղական համայնքներում երեխաների համար ամառային ճամբարներ կազմակերպելու նպատակով:

Բիզնեսներից ստացվող ֆինանսավորումը անկանոն բնույթ ունի և սահմանափակ է հարկային արտոնությունների և բարեգործության մշակույթի բացակայության պատճառով: Փոքր և միջին ընկերությունները ավելի հակված են նվիրատվություն հատկացնել անհատներին, այլ ոչ կազմակերպություններին, և այս գործընթացում մեծ դեր են խաղում անձնական կապերը: Որոշ մեծ ընկերություններ սկսել են որդեգրել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ռազմավարությունները և այդպիսով ընդլայնել սոցիալական խնդիրների համար նախատեսված իրենց ֆինանսավորումը: Օրինակ, հեռահաղորդակցության մի մեծ ընկերություն՝ Օրանժ Արմենիան, ստեղծեց «Օրանժ» հիմնադրամը, որի հետաքրքրության շրջանակներում են համայնքային զարգացման, երեխաների, առողջապահության և հաշմանդամության հարցերը:

Պետությունը ՔՀԿ-ների աջակցության համար 2011թ. ընդհանուր առմամբ տրամադրել է մոտ 8 մլն ՀՀ դրամ: Այդ աջակցության մեծ մասը ոչ-մրցութային հիմունքներով տրվել է սպորտային ֆեդերացիաներին և պետական ֆինանսավորմամբ հիմնադրված կամ պետության կողմից կառավարվող կազմակերպություններին: Որոշ ՔՀԿ-ներ, հատկապես նրանք, որ սոցիալական ծառայություններ են տրամադրում տարեցներին և հաշմանդամներին, ևս կանոնավոր պետական ֆինանսավորում են ստանում նախարարությունների միջոցով: Տարեկան մոտ 250.000 ԱՄՆ դոլարի նախագահական դրամաշնորհներ են տրամադրվել ծխելու դեմ պայքարի քարոզչության համար, իսկ ՀՀ Մշակույթի նախարարությունը մոտ 25,000 ԱՄՆ դոլար է տրամադրում ազգային փոքրամասնությունների ՔՀԿ-ներին: Մարզային ՔՀԿ-ները սահմանափակ ֆինանսավորում են ստացել համայնքապետարաններից, թեև որոշ համայնքներ, այդ թվում՝ Վանաձորը և Մարտունին, ՔՀԿ-ների գործունեության ֆինանսավորման առանձին բյուջետային տող են նախատեսել:

ՔՀԿ-ները դժվարություններ են ունենում վճարովի ծառայությունների մատուցման ոլորտում: Ներկայիս իրավական դաշտը պահանջում է, որ հասարակական կազմակերպությունը առանձին ձեռնարկություն գրանցի՝ տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Շատ կազմակերպություններ չեն կամենում դիմել այդ քայլին՝ տնտեսական հնարավոր ռիսկերի, լրացուցիչ ծախսերի և նոր վարչական ու ֆինանսական համակարգեր ստեղծելու անհրաժեշտության պատճառով:


Մյուս կողմից, որոշ կազմակերպություններ հաջողությամբ ստեղծել են սոցիալական ձեռնարկություններ՝ եկամուտ վաստակելու նպատակով: Այսպես, Եվրասիա համագործակցության հիմնադրամի աջակցությամբ երեք ՔՀԿ-ներ առանձին հիմնադրամ կամ ընկերություն հիմնեցին՝ տնտեսական գործունեությունից եկամուտ ստանալու

նպատակով: Օրինակ, Սյունիքում “Կանանց ռեսուրսների կենտրոն” ՀԿ-ն կազմակերպության որոշ ինստիտուցիոնալ կարիքները հոգալու համար եկամուտ է վաստակում իր ձեռնարկության միջոցով՝ պատրաստելով ձեռքի աշխատանքներ:

Թեև Հայաստանի ՀԿ-ները անդամակցության վրա հիմնված կազմակերպություններ են, անդամակցության վճարները նրանց եկամուտի չնչին մասն են կազմում:

ՔՀԿ ֆինանսական կառավարման համակարգերը նկատելիորեն բարելավվել են սահմանափակ ֆինանսավորման համար աճող մրցակցության պատճառով: ՔՀԿ-ներն ավելի արհեստավարժ են դարձել իրենց հաշվապահության, ֆինանսական պլանավորման և բյուջետավորման ոլորտներում: ՔՀԿ-ների աճող քանակն իրենց ֆինանսական և գործունեության հաշվետվությունները տեսանելի են դարձնում հանրությանը՝ թե տպագիր և թե էլեկտրոնային միջոցներով: Հիմնադրամների մեծամասնությունը ամենամյա աուդիտորական ստուգում են անցնում և իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են թերթերում, ինչպես և նախատեսված է “Հիմնադրամների մասին” օրենքով:

### ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ 3.4



ՔՀԿ-ների կողմից շահերի պաշտպանության նախաձեռնությունները շարունակեցին ընդայնվել 2011թ.: ՔՀԿ-ները ավելի լավ էին կարողանում արտահայտել իրենց տեսակետները ու ավելի արդյունավետ պայքարել իրենց շահերի համար 2011թ.:


Տարվա ընթացքում հատկապես ակտիվ էին բնապահպանական խմբերը: ՔՀԿ ներկայացուցիչներից և անհատ ակտիվիստներից կազմված “Պահպանենք Թոչկանի ջրվեժը” բնապահպանական խմբի անդամները պայքարում էին ջրվեժին վտանգ սպառնացող փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման դեմ: Կառավարության և բիզնեսի ներկայացուցիչները մեղադրեցին բնապահպանական խմբին՝ տնտեսական աճի ու երկրի առաջնահերթությունների ճանապարհին խոչնդոտներ ստեղծելու համար: Այնուամենայնիվ, մի շարք հանդիպումներից ու տեղեկատվական արշավներից հետո, 2011թ. վերջին ջրվեժը ստացավ հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ:

2011թ. աշնանը շահերի պաշտպանության ևս մեկ քարոզարշավ սկսվեց ՔՀԿ ոչ ֆորմալ խմբի կողմից, որը բողոքում էր բանակում խաղաղ պայմաններում զինվորների մահվան դեպքերի դեմ, որոնք հաճախ ներկայացվում էին որպես ինքնասպանություններ: Մասնավորապես, բողոքի մեծ ակիք բարձրացավ հայկական բանակում երեք զինծառայողների սպանությունից հետո՝ կառավարությանը ստիպելով անհապաղ հետաքննություն հայտարարել: Այնուամենայնիվ, Պաշտպանության նախարարությունը չընդունեց իր հասցեին հնչած մեղադրանքները պնդելով, որ ՔՀԿ-ները ֆինանսավորվում են միջազգային դոնորների կողմից և նպատակ ունեն վարկաբեկել երկրի հեղինակությունը: Ներկայումս բանակցություններ են տարվում իրավիճակին հետևելու նպատակով քաղաքացիական մոնիտորինգի խմբի ստեղծման շուրջ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ձեռնարկությունների միությունը մի նախագիծ է իրականացրել՝ մաքսային վարչարարության նվազեցման, մաքսային գործարքների թափանցիկության բարելավման և մաքսային գրանցումների ավելի մեծ հասանելիության ապահովման նպատակով: Ծրագրի շրջանակներում կառավարական հաստատությունները և ՏՏ ձեռնարկությունները վերլուծություններ իրականացրեցին և փոփոխությունների առաջարկը ներկայացրեցին խորհրդարանին:

Հասարակական կազմակերպությունների մասին օրենքում կառավարության կողմից առաջարկված փոփոխությունների դեմ պայքարող ազգային կոալիցիան 2011թ. փոխակերպվեց Քաղաքացիական հասարակության զարգացման ցանցի: Ցանցը բաղկացած է տասնութ ՔՀԿ-ների ներկայացուցիչներից և կենտրոնացած է ՔՀԿ դաշտին առնչվող օրենսդրության վերլուծության և անհրաժեշտ փոփոխությունների առաջարկների մշակման շուրջ: Կառավարությունն ավելի բաց է եղել օրենսդրության շուրջ ՔՀԿ համայնքի հետ քննարկումների համար՝ նպաստելով ավելի կառուցողական երկխոսությանը: Օրենսդրական այն փոփոխությունները, որոնք սկիզբ դրեցին նախաձեռնությանը, չեն ընդունվել խորհրդարանի կողմից և առայժմ սառեցված կարգավիճակում են:

### ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ՝ 3.9



ՔՀԿ-ների կողմից մատուցվող ծառայությունների մեծամասնությունը կենտրոնացած է խոցելի խմբերի հետ աշխատանքի, իրավական, սոցիալական և բժշկական աջակցության տրամադրման, և տարբեր բնագավառներում ոչ-ֆորմալ կրթության ու կարողությունների զարգացման գործունեության շուրջ: Ծառայություն


մատուցող ՔՀԿ-ները 2011թ. ընթացքում ավելի մասնակցային մոտեցում էին օգտագործում՝ համայնքային կարիքների նկատմամբ իրենց գործունեության համապատասխանությունը բարելավելու համար, թեև այս ոլորտներում դեռևս բարելավման զգալի անհրաժեշտություն կա:

Մակավաթիվ կազմակերպություններ են փորձում իրենց ֆինանսական կայունությունը բարելավել նոր մոտեցումների միջոցով, ինչպիսիք են՝ վճարովի ծառայությունների մատուցումը կամ պետական պայմանագրերը: ՀԿ-ների կողմից վճարովի ծառայությունների մատուցման իրավական սահմանափակումների պատճառով շատ կազմակերպությունների համար ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքումը կառավարության հետ ևս անհնար է դառնում, թեև կան բացառություններ: Իր փորձի և ողջ Հայաստանում առկա ցանցի շնորհիվ “Առաքելություն Հայաստան” ՀԿ-ն աչքի է ընկնում կառավարության ֆինանսավորում ստանալու հարցում՝ բարեգործական ճաշարանների գործունեության և տարեցների համար բժշկական ու սոցիալական խնամքի կազմակերպման համար: Մինևույն ժամանակ, ՔՀԿ-ներն ու նախարարությունները ակտիվորեն շարունակում են համատեղ գործունեության նախաձեռնությունները: 2011թ-ին ՔՀԿ-ները կառավարության կողմից ներգրավվել են փորձագիտական և մոնիտորինգային դերերում, այնպիսի բնագավառներում, ինչպիսիք

են կոռուպցիայի դեմ պայքարը, բնապահպանությունը, կրթությունն ու առողջապահությունը:

Սոցիալական ձեռնարկությունների զարգացման ուղղությամբ Եվրասիա համագործակցության հիմնադրամի ջանքերն արդեն սկսել են արդյունք տալ՝ ինչպես նշվել է վերը, որոշ ՔՀԿ-ներ կարողանում են ապահովել իրենց ծառայությունների ծախսաձածկումը: Սոցիալական ձեռնարկությունները նաև աշխատանքի լրացուցիչ հնարավորություններ են ընձեռում կազմակերպությունների շահառուների համար:

### ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ՝ 3.5



Ծառայություններ մատուցող կազմակերպությունները (ՏՄԿ) և ՔՀԿ ռեսուրս կենտրոնները 2011թ. շարունակում էին դասընթացներ ու խորհրդատվություններ մատուցել մի շարք կազմակերպությունների համար: Այնուամենայնիվ, ինչպես և 2010թ., անվճար դասընթացների ծավալը և ոլորտները սահմանափակ էին, մինչդեռ ՔՀԿ-ներն ի վիճակի չէին օգտվել վճարովի դասընթացների մեծ մասից:


Տեղական ՔՀԿ-ներին դրամաշնորհների սահմանափակ քանակ է տրամադրվել մի քանի տեղական հիմնադրամների կողմից, ներառյալ Եվրասիա համագործակցության հիմնադրամը և Օրանժ հիմնադրամը:

ՔՀԿ-ների կողմից փորձի փոխանակման, համագործակցության և ռեսուրսների համատեղ օգտագործման հնարավորությունների օգտագործումը աճող միտում ունի: Ֆեյսբուքի և հաղորդակցության նմանատիպ այլ նոր միջոցների օգտագործումը ավելացրել է ՔՀԿ-ների միջև ցանցերի ստեղծման հնարավորությունները: ՔՀԿ-ների կողմից կոալիցիաներն ու ցանցերը սովորաբար ստեղծվում են շատ հստակ նպատակների համար: 2011թ. շահերի պաշտպանության կոալիցիաներ են հիմնվել ՔՀԿ օրենսդրության, բնապահպանության, մարդու իրավունքների պաշտպանության և այլ հարցերի շուրջ: Ինչպես արդեն նշվել է, Քաղաքացիական հասարակության զարգացման ցանցը ներկայումս պայքարում է քաղաքացիական հասարակության զարգացման համընդգրկուն փաթեթի ստեղծման համար: Սյունիքի ու Վայոց Ձորի 18 ՔՀԿ-ներ հիմնադրել են մի ցանց, որը զբաղվում է համայնքային զարգացման խնդիրներով: Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցը, որը գործում է Օքսֆամի աջակցությամբ, իր անդամ կազմակերպություններին աջակցություն է տրամադրում փորձի ու գիտելիքների փոխանակման հարցում, տարածք ստեղծելով համատեղ գործունեության նախաձեռնման համար: Օրինակ, 2011թ. հոկտեմբերին “GROW շաբաթ” կոչվող մի ակցիայի ժամանակ Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցի և մի շարք այլ կազմակերպությունների մեծ թվով կամավորներ Գյումրիում ու Եղեգնաձորում երթ կազմակերպեցին և ավելի քան 1000 ստորագրություններ հավաքեցին՝ ի աջակցություն գյուղատնտեսական մթերքների տեղական արտադրության: Քարոզարշավը լայնորեն լուսաբանվեց լրատվամիջոցների կողմից:



ՔՀԿ-ներն ակտիվորեն համագործակցում են լրատվամիջոցների, մասնավորապես առցանց մամուլի հետ՝ տեղեկատվության տարածման և շահերի պաշտպանության իրենց քարոզարշավների համար աջակցություն ստանալու նպատակով: Բազմաթիվ մարզային ՔՀԿ-ներ փոխադարձ շահավետ համագործակցություն են հաստատել նաև տեղական իշխանությունների հետ: ՔՀԿ-ների և բիզնես ընկերությունների միջև գործընկերությունը դեռ զարգացման փուլում է, թեև կան և հաջողված օրինակներ: Բիզնեսի շահերի պաշտպանության ցանցը միավորում է ՔՀԿ-ներին և գործարարներին ձեռներեցության աջակցության նպատակի շուրջ՝ հանրային քաղաքականության ձևավորման գործում մասնավոր և քաղաքացիական հասարակության սեկտորների մասնակցության ընդլայնման միջոցով:

## ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄ՝ 4.0



Ըստ փորձագիտական գնահատումների, ՔՀԿ-ների լուսաբանումը լրատվամիջոցների կողմից 2011թ. նվազել էր: Մամուլը հետաքրքրված չէր ՔՀԿ իրադարձություններով, և ՔՀԿ-ների ու լրատվամիջոցների միջև համագործակցությունը սահմանափակ էր:

Որոշ պետական պաշտոնյաներ մեղադրեցին իրավապաշտպան ՔՀԿ-ներին արտաքին շահերին ծառայելու և գումարի դիմաց “դրսի պատվերներ” կատարելու մեջ: Պետականամետ որոշ լրատվամիջոցներում մի շարք հոդվածներ և հեռուստատեսային հաղորդումներ հաստատում էին կառավարության այդ մեղադրանքները և նշում ավանդաբար հակակառավարական համարվող որոշ իրավապաշտպան ՔՀԿ-ների կողմից դրամաշնորհների ոչ պատշաճ օգտագործման մասին: Այս դիպվածները բացասական իմաստով ուշադրություն գրավեցին ՔՀԿ սեկտորի հանդեպ, թեև կառավարության մեղադրանքները հաստատող փաստարկված ապացույցներ չկային: Մարզերում ԶԼՄ-ներն ավելի շատ հնարավորություններ էին ընձեռում ՔՀԿ-ներին՝ իրենց գործունեությունը լուսաբանելու և ավելի մեծ հանրային ճանաչում ձեռք բերելու համար: Թեև ՔՀԿ-երը սահմանափակ հնարավորություններ ունեն իրենց աշխատանքը հանրայնացնելու համար, նրանք գնալով ավելի շատ են հանրային կապերի ուղղությամբ գործունեություն նախաձեռնում, ինչպես օրինակ շնորհանդեսները, մասնակցությունը տոնավաճառների ու այլ միջոցառումների: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ները դեռևս մարդկային ու տեխնիկական ռեսուրսների պակաս ունեն՝ իրենց աշխատանքը լրատվամիջոցների օգնությամբ պատշաճ կերպով խթանելու համար:

Պետական պաշտոնյաներն ընդհանուր առմամբ բացասական կարծիք ունեն ՔՀԿ-ների վերաբերյալ, որը հիմնականում պայմանավորված է կառավարական մարմինների դեմ ուղղված ՔՀԿ-ների քարոզարշավներով, ինչպես օրինակ ՀՀ Պաշտպանության նախարարությանն առնչվող՝ խաղաղ պայմաններում մահացած զինվորների վերաբերյալ քարոզարշավը ու Բնապահպանության նախարարությանն առնչվող բնապահպանական ակցիաները: Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոնը (ՄԶՄԿ) վերջերս իր զեկույցում եզրակացրել է, որ կառավարության ու ՔՀԿ-ների միջև համագործակցությունը բավականին թույլ է: Ըստ զեկույցի, կառավարությունը կարծում է, որ ոչ առևտրային կազմակերպությունները մեկուսացված են հանրությունից և չունեն անդամակցության կամ աջակիցների հիմքեր: Բացի այդ, շատ ՔՀԿ-ներ ընկալվում են որպես շահույթ

հետապնդող կազմակերպություններ, որոնք քաղաքականության վրա ներգործելու համար անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ չունեն, մինչդեռ ակտիվ կազմակերպությունները ամբողջովին հիմնվում են առաքելության վրա և փորձառու են իրենց բնագավառում: Եվ վերջապես, կառավարությունը ՔՀԿ-ներն ավելի շատ ընկալում է որպես սպառնալիք, քան գործընկեր:

Գործարար հանրության կողմից ՔՀԿ-ների ընկալումը չի փոխվել: Ընկերությունների մեծ մասը չի աջակցում ՔՀԿ գործունեությանը, քանի որ նրանք ՔՀԿ-ներին ընկալում են որպես ոչ-թափանցիկ և անարդյունավետ կազմակերպություններ:

Ինտերնետ հասանելիության ընդլայնման շնորհիվ ՔՀԿ առցանց տեսանելիությունը 2011թ. ընթացքում բարելավվել է: ՔՀԿ-ները իրենց և իրենց գործունեության մասին տեղեկատվություն են հրապարակել ինչպես ավանդական կայքերում, այնպես էլ սոցիալական ցանցերի միջոցով, դրանով իսկ հանրությանը հնարավորություն ընձեռելով ավելի շատ տեղեկատվություն ստանալ ՔՀԿ-ների ու ՔՀԿ գործունեության վերաբերյալ: ՔՀԿ-ների առցանց ներկայությունը նրանց խրախուսում է նաև ավելի հաշվետու և արձագանքող լինել իրենց գործունեությունները պլանավորելիս:

Հայաստանում ՔՀԿ-ների կողմից ընդունված էթիկայի համընդհանուր կանոններ չկան: Որոշ կազմակերպություններ հոչակում են իրենց արժեքներն ու սկզբունքները իրենց հանրային նյութերում ու ռազմավարական ծրագրերում: ՔՀԿ-ների մի փոքր, բայց աճող թիվ հրապարակում է տարեկան զեկույցներ. հիմնականում այն կազմակերպությունները, որոնք առավել զարգացած են և նման ծախսերի համար ֆինանսավորում ունեն:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ինդեքսը (ՔՀԿ ԿԻ) վերլուծական մի գործիք է, որը չափում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի քաղաքացիական հասարակության սեկտորի առաջընթացը: Ինդեքսը հետևում է քսանինը երկրներում վերջին տասնհինգ տարվա ընթացքում առկա՝ քաղաքացիական սեկտորի առաջընթացին: Ինդեքսը ուսումնասիրում է քաղաքացիական հասարակության համար նպաստավոր միջավայրը՝ մասնավորապես իրավական միջավայրը, կազմակերպական կարողությունները, ֆինանսական կայունությունը, շահերի պաշտպանությունը, ծառայությունների մատուցումը, ենթակառուցվածքները և հանրային ընկալումը: Յուրաքանչյուր չափանիշ գնահատվում է յոթ նիշանոց սանդղակով, որտեղ 1–ը շատ առաջադեմ մակարդակն է նշանավորում, իսկ 7–ը՝ զարգացման ցածր մակարդակ: Ինդեքսը մշակվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից՝ յուրաքանչյուր երկրում տեղական կազմակերպության հետ համագործակցությամբ:

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք կապվել Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի հետ՝ [cdpf@cdpf.am](mailto:cdpf@cdpf.am) հասցեով:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2011թ. ՔՀԿ կայունության ինդեքսի անգլերեն տարբերակը կարող եք գտնել հետևյալ հասցեով. [http://transition.usaid.gov/locations/europe\\_eurasia/dem\\_gov/ngoindex/](http://transition.usaid.gov/locations/europe_eurasia/dem_gov/ngoindex/):

**2011թ. ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ**

Երկիր	Իրավական միջավայր	Կազմակերպական կարողություններ	Ֆինանսական կայունություն	Շահերի դաժնիություն	Ծառայությունների մատուցում	Ենթակառուցվածք	Հանրային ընկալում	դաժնի հշի
<b>Հյուսիսային գոտի</b>								
Չեխիայի								
Հանրապետություն	2.8	3.0	3.2	2.1	2.4	2.8	2.4	2.7
Էստոնիա	1.7	2.3	2.4	1.7	2.3	1.6	1.9	2.0
Հունգարիա	առկա չէ	առկա չէ	առկա չէ	առկա չէ	առկա չէ	առկա չէ	առկա չէ	առկա չէ
Լատվիա	2.3	3.0	3.3	2.1	2.5	2.4	3.2	2.7
Լիտվա	2.2	2.9	3.2	2.0	3.4	3.0	2.6	2.8
Լեհաստան	2.2	2.6	2.7	1.7	2.2	1.7	2.2	2.2
Սլովակիա	2.8	3.0	3.4	2.5	2.5	2.3	2.4	2.7
Սլովենիա	3.3	3.8	4.4	3.5	3.5	3.6	3.7	3.7
<i>Միջին</i>	<b>2.5</b>	<b>2.9</b>	<b>3.2</b>	<b>2.2</b>	<b>2.7</b>	<b>2.5</b>	<b>2.6</b>	<b>2.7</b>
<b>Հարավային գոտի</b>								
Ալբանիա	3.9	3.9	4.6	3.6	3.7	4.0	3.8	3.9
Բոսնիա	3.4	3.4	4.8	3.1	3.9	3.8	3.3	3.7
Բուլղարիա	2.2	4.4	4.6	2.7	3.2	3.3	3.2	3.4
Խորվաթիա	2.9	3.0	4.3	3.1	3.2	2.7	3.0	3.2
Կոսովո	3.5	3.8	4.7	3.8	3.9	3.7	3.8	3.9
Մակեդոնիա	3.2	3.7	4.5	3.3	3.8	3.3	4.0	3.7
Մոնտենեգրո	3.5	4.3	4.9	3.5	4.0	3.9	4.3	4.1
Ռումինիա	3.6	3.5	4.3	3.4	3.1	3.2	3.6	3.5
Սերբիա	4.1	4.3	5.4	3.6	4.2	3.7	4.5	4.3
<i>Միջին</i>	<b>3.4</b>	<b>3.8</b>	<b>4.7</b>	<b>3.3</b>	<b>3.7</b>	<b>3.5</b>	<b>3.7</b>	<b>3.7</b>
<b>Եվրասիա: Ռուսաստան, Արևմտյան ԱՊՀ երկրներ և Կովկաս</b>								
Հայաստան	3.9	3.9	5.2	3.4	3.9	3.5	4.0	4.0
Ադրբեջան	4.7	4.5	5.5	4.6	4.6	4.4	4.8	4.7
Բելառուս	6.9	5.1	6.5	5.8	5.5	5.4	5.9	5.9
Վրաստան	3.3	4.1	5.0	4.3	4.1	4.3	4.1	4.2
Մոլդովա	4.2	4.0	5.0	3.6	4.4	3.6	4.0	4.1
Ռուսաստան	4.5	4.3	4.8	4.0	4.2	4.0	4.7	4.4
Ուկրաինա	3.5	3.5	4.3	2.6	3.3	3.4	3.6	3.5
<i>Միջին</i>	<b>4.4</b>	<b>4.2</b>	<b>5.2</b>	<b>4.0</b>	<b>4.3</b>	<b>4.1</b>	<b>4.4</b>	<b>4.4</b>
<b>Կենտրոնական Ասիա</b>								
Ղազախստան	3.9	4.2	4.6	3.9	4.0	3.7	4.1	4.1
Ղրղզստան	3.9	4.3	5.3	3.2	4.0	3.7	4.1	4.1
Տաջիկստան	4.9	4.5	5.6	4.8	4.4	4.5	4.5	4.7
Թուրքմենստան	6.2	5.3	6.0	6.0	5.2	5.2	5.5	5.6
Ուզբեկստան	6.0	5.5	6.2	5.9	5.4	5.6	5.6	5.7
<i>Միջին</i>	<b>5.0</b>	<b>4.8</b>	<b>5.5</b>	<b>4.8</b>	<b>4.6</b>	<b>4.5</b>	<b>4.8</b>	<b>4.8</b>
Եվրասիա և Կենտրոնական Ասիա <i>Միջին</i>	<b>4.7</b>	<b>4.4</b>	<b>5.3</b>	<b>4.3</b>	<b>4.4</b>	<b>4.3</b>	<b>4.6</b>	<b>4.6</b>

առկա չէ = առկա չէ՝ տեխնիկական պատճառներով այդ տարվա գնահատականը բացակայում է